ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

ՄԱՐԻԵՏԱ ՇԱՀԻՆՅԱՆ

Շուրջ ութ տասնյակ գրքերի, գրականագիտական մեծարժեք մենագրությունների, հարյուրավոր ակնարկների ու հրապարակախոսական հոդվածների հանրահանաչ հեղինակ Մարիետա Շահինյանը պատկանում է նախահեղափոխական ռուսական մտավորականության այն ներկայացուցիչների թվին, ովքեր անվերապահ ընդունեցին Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը և առաջին իսկ օրերից ազնվաբար կսնգնեցին նրա հաղթանակը ամրապնդող պատվավոր դիրքերում, լծվեցին սովետական գրականության ստեղծման դժվարին գործին:

Ծնվել է 1888 թ. ապրիլի 2-ին Մոսկվայում, Լազարյան հեմարանի սան, Մոսկվայի համալսարանի դասախոս և ժամանակի ականավոր ախտորոշողներից մեկի՝ Սարգիս Շահինյանի ընտանիքում:

Բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն՝ «Առաջին հանդիպումները» լույս տեսավ 1909 թ.: Այն դեռևս կրում էր սիմվոլիստների ազդեցությունը, սակայն հանդիպում էին բանաստեղծություններ, որոնցում երիտասարդ բանաստեղծուհին փորձեր էր անում հակադրվելու սիմվոլիստական վերացականությանն ու միստիկային:

1913 թ. լույս տեսավ Մ. Շահինյանի բանաստեղծությունների երկրորդ ժողովածուն՝ «Օրիենտալիան», որը խոսում էր բանաստեղծուհու՝ կյանքին ռեալիստորեն մոտենալու և այն կոնկրետ պատկերելու ոչ միայն սոսկ ցանկության, այլև որոշակի հաջողության մասին: «Օրիենտալիայում» գետեղված էին «Հայաստանին», «Հայ ժողովրդին» հիանալի բանաստեղծությունները, որոնցում հեղինակը որդիական կսկիծով ու ցավով էր խոսում «հեռավոր հայրենիքի», տառապյալ ու «անտուն» հարազատ ժողովրդի դառը հակատագրի մասին.

1915 թվականին Մ. Շահինյանը գրում է նախահեղափոխական շրջանի իր ամենածավալուն ու վերջին գործը՝ «Յուր հակատագիրը» վեպը, որտեղ պատկերված էր այն հեղձուցիչ մթնոլորտը, որում գտնվում էր ռուսական մտավորականությունը Հոկտեմբերին նախորդող տարիներին: Վեպից ստացված հիմնական տպավորությունն այն էր, որ այդպես ապրել այլևս հնարավոր չէ: Միակ փրկությունը ակտիվ գործունեությունն է, աշխատանքը:

Մ. Շահինյանը Դոնի Ռոստովում էր, երբ տեղի ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխությունը: Այն մասին, թե ինչպես հեղափոխությունը հանդիսացավ նրա վաղեմի իղձերի իրականացումը և թե ինչպես նա լծվեց հեղափոխության հաղթանակից հետո սովետական առօրյային ակտիվորեն մասնակցելու պատվավոր գործին, Մ. Շահինյանը գրում է «Ինչպես ես դարձա տեքստիլ գործի հրահանգիչ» ինքնակենսագրական ակնարկում, որտեղ պատմվում է, թե ինչպես նա Ռոստովում հիմնադրում է տեքստիլ ուսումնարան, շրջում շրջակա կազակական ու հայաբնակ գյուղերը և օգնում վերականգնելու քայքայված տնտեսությունը:

1920 թ. Մ. Շահինյանը մեկնում է Պետրոգրադ, որտեղ Մ. Գորկու շուրջը համախմբվել էին հին մտավորականության լավագույն ներկայացուցիչները: Նկատելով հետաղեմ մտավորականության մի մասի հակաժողովրդական տրամադրությունը, Մ. Շահինյանը 1921 թ. դեկտեմբերին Պետրոգրադի «Իզվեստիա» թերթում հանդես է գալիս «Մի երկու խոսք ռուսական մտավորականության մասին» կրոտ հոդվածով:

1920-ական թթ. սկզբներին Շահինյանը ձեռնամուխ է լինում բաղաքացիական կռիվների, սովետական իշխանության առաջին քայլերի պատկերմանը: Դրանք «Փոփոխություն» (1923 թ.), «Վերնախավի տիկնոջ արկածները» (1924 թ.) վեպերն էին, «Ագիտվագոն» հիանալի պատմվածքը: Հեղինակի օրագրերի, ինչպես նաև ժամանակի լրագրային հոդվածների և փաստական լայն նյութի հիման վրա գրված «Փոփոխություն» վեպ-եղելությունը բաղաքացիական կռիվներին նվիրված լավագույն գործերից է, որտեղ պատկերված են Ռուսաստանի հարավում սովետական իշխանության հաղթանակի համար մղված մարտերի դրվագները: «Փոփոխությունը» ժամանակին արժանացել է Վ. Ի. Լենինի դրվատանքին: Այդ մասին «Красная новь» ամսագրի խմբագիր Ա. Վորոնսկին Շահինյանին 1923 թ. մարտի 17-ին գրած նամակում ասում է. «Դիտե՞ք, Ձեր գրվածքները շատ են դուր գալիս ընկեր Լենինին...» (М. Шагинян, Дневники 1917—1931, Л., 1932, էջ 68):

1922 թ. սեպտեմբերի 17-ին Մ. Շահինյանը «Правда» թերթի մանդատով երկարատև գործուղման է մեկնում Անդրկովկասի հանրապետություններ: Մեկը մյուսի հետևից լույս են տեսնում նրա փայլուն ակնարկները Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի մասին:

Սա Մ. Շահինյանի երկրորդ այցելությունն էր Հայաստան: Առաջինը 1917 թ. էր, երբ սովի և աղքատության, անթիվ գաղթականներով ողողված երկիրը պատերազմի հետևանքով անդունդի եզրին էր հասել: Այլ պատկեր է հառնում գրողի առջև այժմ. «Փոքրիկ Հայաստանը այժմ իրենից ներկայացնում է այն պատմական իրողությունը, թե որքան հիշտ է ու արգասաբեր մեր դարի ինտերնացիոնալի միտքը: Բազում տարիների ընթացքում նա առաջին անգամ է խաղաղությամբ շնչում, ո՛չ թե խոսքով, ո՛չ թե թղթի վրա կամ լոզունգներում՝ նրա խրճիթներին խաղաղություն է պարգևվել»,— գրում էր Մ. Շահինյանը («Советская Армения», М., 1923, էջ 26):

Ինչպես երիտասարդ հանրապետության մասին ակնարկները, այնպես էլ Հայաստանի առաջին գյուղատնտեսական համագումարի նյութերը, որոնք ամենայն մանրամասնությամբ ու բարեխղճությամբ սղագրվել էին Շահինյանի կողմից, ամփոփվեցին նրա «Սովետական Հայաստան» գրքում: Այստեղ առաջին անգամ համամիութենական ընթերցողին պատմվում էր մեր երիտասարդ հանրապետության մասին: Ալ. Մյասնիկյանը Շահինյանին գրած նամակում նշում էր. «...Ձեր վերջին գրքերը, հատկապես «Սովետական Հայաստանը» մեզ ուրախացնում են» (А. Е. Маркарян, Мариэтта Шагинян, Ереван, 1956, էջ 36):

Այսպիսով, սկսած 1920-ական թթ., Մ. Շահինյանի ստեղծագործություններում կարևոր տեղ է գրավում սովետահայ իրականությունը, որը զգալի դեր խաղաց Շահինյանի՝ որպես սովետական գրողի վերջնական ձևավորման, հանրահայտ «Հիդրոցենտրալ» վեպի ստեղծման գործում: Այս կապակցու-

բյամբ ինքը Մ. Շահինյանը դեռևս 1930-ական թթ. գրել է. «Հայաստան ժամանելը ինձ մոտ կրկնվում է... մի քանի անգամ և հանդիսանում է չափի յուրօրինակ մի միավոր. յուրաքանչյուր անգամ արդեն այն եթկիրը չէ և նյութի ընկալման այն եղանակները չեն, իրականությանը մասնակցելու այն աստիճանը չէ» («Дневники 1917—1931», էջ 8):

Հիրավի, սովետահայ իրականությանը նվիրված 1920-ական թթ. իր բազմաթիվ ակնարկներում ամեն անգամ նյութի ընկալման նոր եղանակ, նոր ձև է փնտրում Մ. Շահինյանը, նրանցում արծարծված պրոբլեմների հանդեպ ցուցաբերելով կրքոտ ու դիրքորոշված վերաբերմունք, դրանց հաղորդելով հեղինակային «ես»-ի անմիջականությունը, հարցերը ուսումնասիրում ամենայն մանրամասնությամբ և բարեխղճությամբ: Թերևս դա է պատճառը, որ այդ ակնարկներից շատերը մինչև օրս էլ պահպանել են իրենց կարևորությունը հանրապետության այն տարիների տնտեսության, մշակույթի, մարդկանց մասին մեր այսօրվա պատկերացումները ամբողջական դարձնելու գործում:

Մ. Շահինյանը անմիջական մասնակցություն ունեցավ Զորագէսի կառուցմանը: Նորակառույցի առօրյան էլ հանդիսացավ «Հիդրոցենտրալ» (1931 թ.) վեպի նյութը: Սովետահայ իրականության բազմաթիվ կարևոր կողմեր իրենց ռեալիստական արտահայտությունը գտան վեպում: Նրանում հատկապես լավ է պատկերված հայ գյուղի զարթոնքը: Մ. Շահինյանը Զորագէսի շինարարությանը մասնակցելու համար պարգևատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով: Հայաստանի Կենտգործկոմի որոշման մեջ այս կապակցությամբ ասված էր, որ Շահինյանը «իր զրական գործերով աջակցել է հիդրոկայանի շինարարության արագ ավարտին»:

1951 թ. ՍՍՀՄ պետական մրցանակի արժանացած «Ճանապարհորդություն Սովետական Հայաստանում» (1950 թ.) գիրքը հեղինակի շուրջ քառասնամյա աշխատանքի հանրագումարն է: Հայ ժողովրդի անցյալի, ներկայի և ապագայի մասին այս երկը իր մեջ ներառնված հարուստ նյութով, սովետահայ իրականության բազմաբիվ ու բազմաբովանդակ փաստերով հանդիսանում է մի հանրագիտարան-տարեգրություն, որն իր տեսակի մեջ առաջինն էր ու, ինչպես Մ. Շահինյանի բազմաբիվ գրքերը, միանգամայն նորարարական: Սա էր պատճառը, որ այն թարգմանվեց սովետական ժողովուրդների ու արտասահմանյան լեզուներով, սկիզբ դրեց սովետական գրականության մեջ մի շարք նույնատիպ գրքերի՝ Միության մյուս հանրապետությունների մասին:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Մ. Շահինյանը իր ակնարկներով, հրապարակախոսական հոդվածներով, գործարաններում, կոլտնտեսություններում ունեցած ելույթներով օգնում էր Հայրենիքին: Նրա երկարատև

շրջագայությունները Ուրալում և Սիբիրում օգնում են գտնել այն բնորոշը, որը հատուկ էր մեր մարդկանց՝ Հայրենիքի ծանր օրերին, վեր հանել թիկունքի համար կարևոր տնտեսական, մշակութային, գաղափարական հարցեր: Պատերազմի տարիներին լույս տեսած «Ուրալի պաշտպանությունը» (1944 թ.) գիրքը թիկունքի հիանալի մարդկանց մի ամբողջ պատկերասրահ է:

Շահինյանի ճանապարհորդությունները հայրենի երկրով շարունակվում են Հայրենական պատերազմից հետո ևս: Նա անցնում է հետպատերազմյան ճնգամյակի ճանապարհներով՝ Ղազախստան, Սիբիր, Մուրմանսկ, Կերչ, Անդրկովկաս: Արդյունքը՝ «Հնգամյակի համփաներով» (1947 թ.) ակնարկների ժողովածուն է, որտեղ հեղինակը իրականության առանձին դեպքերը դիտում է երկրի հետպատերազմյան վերականգնման ու զարգացման միասնության մեջ և այդ տեսանկյունով էլ հայտնագործում այն նորը, որը բնորոշ է սովետական մարդուն պատմական տվյալ ժամանակաշրջանում:

Դիտական մեծ արժեք է ներկայացնում Մ. Շահինյանի «Դյորբե» ուսումնասիրությունը (թարգմանված է մի քանի լեզուներով), իսկ 1955 թ. Երևանում լույս տեսած ««Էյոյուղներ Նիզամու մասին» աշխատությունը եղբայրական Ադրբեջանի մեծ բանաստեղծի ստեղծագործության մի շարք հարցերի խոր գիտական ուսումնասիրությունն է:

Լենինյան թեման Մ. Շահինյանի՝ տասնամյակներ հարատևող հետաքրքրություններից է. նրա ամենամեծ նախասիրություններից մեկը: Շահինյանը դրան անդրադառնում է որպես սեփական գեղարվեստական ստեղծագործությունը սնող աղբյուր, գրողի՝ մեր իրականության անկյունաքարային մի շարք երևույթների ուսումնասիրման հուսալի աղբյուր և անում այդ բոլորից բխող գեղարվեստական հայտնություններ, հանգում ինքնատիպ մեկնաբանությունների:

1938 թ. Մ. Շահինյանը ավարտում է Լենինյան իր քառապատումի առաջին մասը՝ «Ուլյանովների ընտանիքը» վեպ-ժամանակագրությունը (հետագայում այն վերանվանվեց «Որդու ծնունդը»): Գրքի մասին դրվատանքի խոսքեր ասացին Ն. Կ. Կրուպսկայան, Լենինի եղբայր Դ. Ի. Ուլյանովը: «Մ. Շահինյանը ոչ միայն ֆիքսել է Ուլյանովների ընտանիքի մասին եղած պատմական փաստերը, այլև դրանք մարմնավորել գեղարվեստական կերպարներում... Գիրքն ընթերցողներին ծանոթացնում է հետաքրքրությունների ու ակնկալությունների այն միջավայրին, որի մեջ ապրում էր Ուլյանովների ընտանիքը»,— գրում էր Դ. Ուլյանովը («Известия», 1938, 24 марта).

Մ. Շահինյանի լենինապատումի հաջորդ մասը՝ «Առաջին Համառուսաստանյանը» (1965 թ.) պատկերում է անցյալ դարի 70-ական թթ. ռուսական իրականությունը: Հեղինակը չի զունազարդում ո՛չ պատմական դարաշրջանը և ո՛չ էլ Լենինի հոր՝ Իլյա Նիկոլաևիչի, մոր՝ Մարիա Ալեքսանդրովնայի, ինչպես նաև մյուս պատմական դեմքերի կերպարները, վերակենդանացնում է հասարակական և ժողովրդական կյանքի այն ոլորտները, որոնք առնչվում էին Ուլյանովների կյանքի ու գործունեության հետ: Վեպում պատկերվում է երիտասարդության շրջաններում 1870-ական թթ. տիրող հակաբակունինյան մթնոլորտը, որ Ռուսաստանում մարքսիզմը պրոպագանդելու պարարտ հող նախապատրաստեց: «Մարդուն դարաշրջանի պատմական իրադրության մեջ» նկարագրելու շահինյանական ունակությունը՝ դա առավելագույն նշգրտության ձգտելու, վաղուց անցած դարաշրջանը կենդանաց-

նելու, նկարագրվող երևույթներն ու դեպքերը «այսժամյա» դարձնելու մեջ է: Դրանով է պայմանավորված «Առաջին Համառուսաստանյանի» մեզ այնքան մոտ ու հարազատ լինելը: Հեղինակը կարողացել է անցյալի բարդ ու կնճռոտ պրոբլեմները լուծելիս հանդես բերել գեղարվեստական մեծ տակտ ու կարողություն, գտնել պատմաբարոյական այն հիմքը, որի վրա պետք է ձևավորվեր լենինյան բնավորությունը:

Մ. Շահինյանի լենինյան քառապատումի երրորդ գիրքը («Հարցատոմս պատմությունից», 1960 թ.) նվիրված է Լենինի գիմնազիան ավարտելուն, երբ երիտասարդ Վոլոդյա Ուլյանովը քննություն է հանձնում պատմությունից, քաջ գիտակցելով, որ դա սոսկ ավարտական քննություն չէ, այլ հետագա կյանքի իրավունքը և ուղիները նշող մի իսկական փորձություն, որը խարսխված է այն խոր համոզմունքի վրա, թե կարելի է ժողովրդի համար հասնել մարդավայել կյանքի «ոչ թե միայնակ, ոչ այնպես, ոչ այն ճանապարհով», ինչպես եղել է պատմության մեջ մինչ այժմ:

Քառապատումի վերջին՝ «Զորս դաս Լենինից» (1968 թ.) գրքում ևս հեղինակի մտքերը մարմնավորվում են ծանրակշիռ դիտարկումներում, իսկ ընթերցողին հուզելու և վարակելու ձիրքը նույնքան ներգործուն է, ինչպես քառապատումի նախորդ մասերում: Խոսելով այս գրքի մասին, Շահինյանը գրում է. «Ես այն անվանեցի «Զորս դաս Լենինից» այն պատճառով, որ... նրանում շոշափված են միայն լենինյան *մտածողության* առանձին մոմենտներ, նրա *իմացության տեսության* առանձին յուրահատկությունները, նրա վերաբերմունքը *բարոյախոսության պրոբլեմներին, արվեստագետի ստեղծագործությանը, մարդու վարքին:* Դա իրոք միայն չորս դաս է Իլյիչից՝ առնված հենց իրենից, նրա գրքերի ընթերցումից ու նրա մասին հուշերից» (ընդգծումները հեղինակինն են—Հ. Մ.):

Հայրենիքի հետ, նրա անձայրածիր ճամփաներում անեց ու ամրացավ Լենինյան և պետական մտքանակների դափնեկիր, Սոցիալիստական աշխատանքի հերոս, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Մարիետա Շահինյանի վաղուց արդեն զարմանք հարուցող բազմակողմանի տաղանդը, մի մարդու, որի ստեղծագործություններում ոչ միայն սեփական, այլև հայրենիքի կյանքն է ու նակատագիրը, համատեղ անցած երկար ճանապարհը:

Կյանքի ինը տասնամյակը բոլորած, բազմամիլիոն ընթերցողների սիրելի գրողն այսօր էլ զարմանալիորեն լի է նախանձելի եռանդով, ստեղծագործական մտահղացումներով:

Հ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ